ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2

ՀՀ ԷԵԲՊՆ ՋՏՊԿ «Ջրառ» ՓԲԸ-ի կարիքների համար ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-18/27 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով փականների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք. Երևան

28 օգոստոսի 2018թ.
ժամը. 15:00

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝ **Գ. Մկրտչյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱՊ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ, գնահատման հանձնաժողովի ղեկավար)

Անդամներ՝ **Ս. Մելքոնյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/ Գնահատման Աշխատակազմ)

Ն. Համբարձումյան (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու Գնահատման Աշխատակազմ)

Ա. Գևորգյան (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/ Բացման Աշխատակազմ)

Ռ. Անդրեասյան (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/ Բացման Աշխատակազմ)

Հանձնաժողովի քարտուղար՝ **Ն. Նիկոլայան** (համակարգում՝ ԳՊ/ՄՀմ՝ Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող)

1. Հայտերի բացման մասին

(Գ. Մկրտչյան)

«ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-18/27» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով փականների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 2018 թվականի օգոստոսի 28-ին ժամը 15:00-ին ք. Երևան Վարդանանց փակուղի 8ա, 6-րդ հարկ հասցեում:

Գնահատող հանձնաժողովի նախագահը հայտարարեց նիստը բացված և հրապարակեց փականների գնման նախահաշվային գինը մեկ թվով արտահայտված՝

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	Նախահաշվային գինը (ՀՀ դրամ)
1	Պտտվող սկավառակով փականներ	25 500 000 (քսանհինգ միլիոն հինգ հարյուր հազար)
2	Ջրային հոսքերի կարգավորման փականներ	4 500 000 (չորս միլիոն հինգ հարյուր հազար)

Հայտերի բացումն իրականացվել է www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված կարգով:

1.1.Հայտ ներկայացրած մասնակիցների անվանումը

«ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-18/27» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Հ/Հ	Մասնակիցների անվանումը
1	«Էյչ Գրուպ» ՍՊԸ
2	«Ինվեստ Բիզնես» ՍՊԸ

1.2 Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին:

Մասնակիցների կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

1.3 Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:

«Էյչ Գրուպ» ՍՊ և «Ինվեստ Բիզնես» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված փաստաթղթերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

1.4 Մասնակիցների առաջարկած գինը

(ՀՀ դրամ)

Հ/Հ	Մասնակիցների անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատես-վող շահույթի հանրագումարը)	Ընդհանուր գին, ներառյալ ԱԱՀ
Չափաբաժին 1 Պտտվող սկավառակով փականներ			
1	«Էյչ Գրուպ» ՍՊԸ	37 500 000 (երեսունյոթ միլիոն հինգ հարյուր հազար)	45 000 000 (քառասունհինգ միլիոն)
2	«Ինվեստ Բիզնես» ՍՊԸ	21 650 000 (քսանմեկ միլիոն վեց հարյուր հիսուն հազար)	25 980 000 (քսանհինգ միլիոն ինը հարյուր ութսուն հազար)
Չափաբաժին 2 Ջրային հոսքերի կարգավորման փականներ			
1	«Էյչ Գրուպ» ՍՊԸ	12 500 000 (տասներկու միլիոն հինգ հարյուր հազար)	15 000 000 (տասնհինգ միլիոն)
2	«Ինվեստ Բիզնես» ՍՊԸ	23 083 333,33 (քսաներեք միլիոն ութսուներեք հազար երեք հարյուր երեսուներեք ամբողջ երեսուներեք)	27 700 000 (քսանյոթ միլիոն յոթ հարյուր հազար)

1.5 Հայտերի գնահատման մասին:

Գնահատող հանձնաժողովն ուսումնասիրեց մասնակիցների փաստաթղթերը և «Էյչ Գրուպ» ՍՊ և «Ինվեստ Բիզնես» ՍՊ ընկերությունների հայտերում անհամապատասխանություններ չհայտնաբերեց:

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

«Էյչ Գրուպ» ՍՊ և «Ինվեստ Բիզնես» ՍՊ ընկերությունների հայտերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

1.6 Բանակցությունների վարման մասին:

Քանի որ մասնակիցների առաջարկած գները գերազանցում են գնման հայտով նախատեսված նախահաշվային գները, 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ ճանաչելու նպատակով գնահատող հանձնաժողովը որոշեց բավարար գնահատված մասնակիցներին հրավիրել բանակցությունների:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

1.7 «ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-18/27» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի վերաբերյալ հարցումների և պարզաբանումների մասին:

Գնման ընթացակարգի վերաբերյալ հարցումներ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

2.Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին

(Գ. Մկրտչյան)

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել բանակցությունների վարման մասին ծանուցումը բավարար գնահատված մասնակիցներին ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ աշխատանքային օրվա ժամը 11:30-ին, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա 6-րդ հարկ, հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Գ. Մկրտչյան

Անդամներ՝ _____ Ս. Մելքոնյան

_____ Ն. Համբարձումյան

_____ Ա. Գևորգյան

_____ Ռ. Անդրեասյան

Հանձնաժողովի քարտուղար _____ Ն. Նիկոլայան